ունի զհոտ բարի՝ հեռաւորաց և մերձաւորաց, նաև զչուքն հովանի, ընդ ձեզ այս ևեթ բաւականասցի՝ զի զովանայցէ ի ձեռն ձեր ոգի իմ երկիւղալից։ Ո՛վ սրբասուն որդեակ իմ Երեմիաս, ունէի, ասէ, ի սրտէ կարօտ առ փափաքելիդ, սակայն կամացն Աստուծոյ յամենայն լեզուէ աւրհնաբանութիւն, իսկ զքո փափաք որ ի կամս նորա գիտեմ, ապենիազն այն լցուսցէ՝ մաղթանօք սրբոց և յիմս աղօթից։ Ո՛վ ամենախորհուրդ, ասէ, զի՞ ասացից քեզ, քանի՛ տացից աւրհնութիւնս. և ցկինն կողմն ասէր. կին դու ահա՛ յորդի քո, և առ իմ ասէ. Ո՛վ հոգիածին որդեակ իմ, ահա՛ մայր քո. մինչև ցարդ որ փարէիր[1]) առ խնայթեալ հայրս քո, նոյնպէս և մնա՛ յառ մայրդ ամենայն խորհրդեամբ ի Տէր Քրիստոս և անմոռանալի ունել զիս աղաչեմ։ Ո՛վ անբիծդ, մի՛ կարծեսցես լինել քեզ գերաբուն, այլ ամենայնիւ սանձեա՛ զքեզ միայն առ ոտս կատարելոց։ Ցոյժ երախտաւոր զմահտեսի մայրդ ծանիցես քեզ գոլ, որով յարբունս սուրբս հասար մաքրալից։ Ո՛վ սուրբ լսելիդ, զոր ինչ միանգամ լուար՝ լսեցո՛ յ և ամենայն բարեկամաց և ծանօթից որք ոչն գտանին և ողջունեա՛ զնոսա, զի ահա՛ հրաժարիմ յամենեցունց և երթամ ի ճանապարհս երկաբաձիգ և յանդառնալին՝ ի տուն յաւիտենից։ Ա՛յ ով անձկալի[2]) կարգաւորք, որպէս զԿոստանդիանոս ասեմ՝ Թէպէտև ի չափ աստեղ չեմ մերձ առ արփին լուսաւոր զի ունել կարէի զկարդ աստիճանի, որ տենչայր հոգի իմ անձկալից[3])։ Ո՛վ հոգիածին որդեակ իմ Երեմիաս, զեկուսցես առ Եղիազար զտարփումն ոգոյս, այն որ խոցեաց յոյժ եւ նովիմբ տապիմ ահա՛, թէպէտ զուրախութեան լուրն ի մարմնի ոչ լուայ, այն որ տառապեցոյցն դարձեալ բժշկեսցէ։ Ցորժամ ամե-

1) բարէիր. 2) անծկալի. 3) անծկալից.